ՀԱՅԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԺԷ. ԴԱՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ ԵՒ ԺԸ. ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

ԺԶ-ԺԷ. դարերի թուրք-պարսկական պատերազմները եւ դրանց հետեւանքով տեղի ունեցած Հայաստանի բաժանումները նվաճող բռնակալությունների միջեւ ծանր հետեւանքներ ունեցան հայ ժողովրդի կյանքի բոլոր ոլորտներում: Հայ Առաքելական Եկեղեցին հավասարապես կիսում էր բոլոր այն արհավիրքները, որոնք բաժին հասան հայ ժողովրդին Հայաստանի թե՛ արեւելյան եւ թե՛ արեւմտյան մասերում: Հայ Եկեղեցու տնտեսական վիճակի վատթարացման հետ մեկտեղ առաջացել էին կաթողիկոսական գահի համար պայքարող տարբեր խմբավորումներ: Նույնպիսի իրավիճակ էր տիրում նաեւ Հայ Առաքելական Եկեղեցու չորս ճյուղերից մեկի՝ Գանձասարի կաթողիկոսությունում[1]:

Դեռեւս ԺԶ. դարի կեսերից գահակալական պայքար էր ծավալվել այդ աթոռը զբաղեցնող Խաչենի Հասան-Ջալալյան իշխանական տան ներկայացուցիչ հոգեւորականների եւ կաթողիկոսական աթոռին ժառանգաբար տիրելու նրանց իրավունքը վիճարկողների միջեւ: Գանձասարի կաթողիկոսությունում հակաթոռության առաջացումը պայմանավորված էր Հասան-Ջալալյան տոհմի եւ Գանձասարի կաթողիկոսության թուլացմամբ շահագրգռված Սեֆյան շահերի վարած քաղաքականությամբ[2]:

---

1 Աղվանից կամ Գանձասարի Կաթողիկոսն իր եպիսկոպոսական աստիճանով երկրորդն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսից հետո Հայ Առաքելական Եկեղեցու նվիրապետական աստիճանացանկում: Նա թեմական առաջնորդների միջոցով կառավարում էր Աղվանից կաթողիկոսության թեմերը եւ տնօրինում ստացվող եկամուտները: Աշխարհիկ եւ հոգեւոր ներկայացուցիչների ուղեկցությամբ նա մեկնում էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայր, ներկայացնում ընտրվելու մասին համախոհականը եւ օծվում Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից (Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 210, էջ 10բ-11ա): Այս կարգը մասնակի բացառություններով պահպանվում էր դարեր շարունակ՝ մինչեւ Գանձասարի (Աղվանից) կաթողիկոսության վերացումը (1815 թ.): Բացի այդ գոյություն ուներ եւս մի կարգ, ըստ որի Գանձասարի Կաթողիկոսը պարտավոր էր ներկայանալ եւ շնորհավորել նորընտիր Ամենայն Հայոց Կաթողիկոսին (**Սիմէօն Կաթողիկոս Երեւանցի**, Ջամբռ, Գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի եւ պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս եւ իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873, էջ 84): Արեւելյան Հայաստանի՝ պարսկական տիրապետության տակ անցնելուց հետո, ինչպես Ամենայն Հայոց, այնպես էլ Գանձասարի կաթողիկոսների իրավունքները հաստատվում էին պարսից շահի հրովարտակներով («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հրովարտակներ, պրակ III, կազմեց Ք. Կոստիկյանը, Երեւան, 2005, վավ. 14, 43, 57, 61, 65, 69, 85):

2 Լ. Մկրտումյանն այդ մասին գրում է.«Երկպառակտչական այս պայքարը հրահրվում էր պարսից արքունիքի կողմից, որը նպատակ ուներ թուլացնել Աղվանից կաթողիկոսությունը եւ խամաճիկների վերածել այդ կաթողիկոսության աթոռի համար պայքարողներին: Հարկ է նշել նաեւ, որ այս պայքարը պարսկական իշխանությունների համար նաեւ եկամտի աղբյուր էր» (**Լ. Մկրտումյան**, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսությունը XVII-XIX դդ., Երեւան, 2006, էջ 54-55): Այնուհետեւ հեղինակը, հղելով Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» ռուսերեն թարգմանությանը (**Закарий Канакерци**, Хроника, пер.с арм., предисловие и комментарии М.Дарбинян-Меликян, М., 1969, с.159), գրում է. «Բացի կաշառքներից, որ շահին եւ շահական դիվանին, բարձրաստիճան պաշտոնյաներին հաստատման հրովարտակ ստանալու համար տալիս էին կաթողիկոսական գավազանի հավակնորդները, վերջիններս հաստատագրված գումար էլ էին մուծում

Գրիգոր Հասան-Ջալալյան Կաթողիկոսի օրոք (1634-1653) թուլացել էր Գանձասարի կաթողիկոսության վերահսկողությունն իրեն ենթակա թեմերի նկատմամբ: Գանձասարի վանքի միաբանները, Պետրոս եպիսկոպոսի գլխավորությամբ, օգտվելով իրավիճակից, Գրիգորից պահանջում էին հրաժարական տալ՝ պատճառաբանելով, որ Հասան-Ջալալյանները Գանձասարի կաթողիկոսական աթոռը վերածել են ժառանգական սեփականության[3]: Գանձասարի կաթողիկոսության հիմքերը թուլացնող այս պայքարին վերջ տալու նպատակով Գրիգոր Հասան-Ջալալյան Կաթողիկոսի կողմնակիցներն ստիպված էին դիմել զիջումների եւ փոխհամաձայնության եզրեր փնտրել Պետրոս եպիսկոպոսի հետ:

Խաչենի մելիք Աթաբեկ Հասան-Ջալալյանի նախաձեռնությամբ համաձայնություն կայացվեց, ըստ որի Պետրոս եպիսկոպոսը դառնում էր Գրիգոր Կաթողիկոսի որդեգիրը եւ դրանով իրավունք ստանում Գանձասարի կաթողիկոսական աթոռին փոխարինել Գրիգորին նրա մահից հետո[4]: Սրանով փաստորեն ճանաչվում էին Հասան-Ջալալյանների ժառանգական իրավունքները Գանձասարի կաթողիկոսական աթոռին, իսկ Պետրոսն էլ պարտավորվում էր իր մահից առաջ Կաթողիկոս օծել միայն Հասան-Ջալալյան տոհմի ներկայացուցչին՝ կաթողիկոսությունը «տացից եղբօր որդոցն իմոց»[5]:

Հենց սկզբից գիտակցելով Ամենայն Հայոց կաթողիկոսության հետ բարիդրացիական հարաբերություններ ունենալու անհրաժեշտությունը՝ Պետրոս Կաթողիկոսը (1653-1675) վերականգնեց ավանդական եկեղեցական կանոնը՝ Գանձասարի Կաթողիկոս հաստատվելով Էջմիածնում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցու (1655-1680) կողմից[6]:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ նախկին հարաբերությունները վերականգնելուց հետո Պետրոս Կաթողիկոսը ձեռնամուխ եղավ կաթողիկոսության ներքին կարգուկանոնի վերականգնմանը՝ անհրաժեշտության դեպքում դիմելով նաեւ շահին[7]: Պետրոս Կաթողիկոսի ձեռնարկած միջոցառումները նպաստում էին Գանձասարի կաթողիկոսության վանական տնտեսության զարգացմանը, հենարան ստեղծում նրա մշակութային գործունեության համար եւ բարձրացնում կաթողիկոսության հեղինակությունը[8]:

շահական գանձարանին» եւ ավելացնում, որ հայերեն հրատարակության մեջ այս տեղեկությունը բացակայում է (**Լ. Մկրտումյան,** անդ, էջ 55): Իրականում ռուսերեն հրատարակության իր նշած հատվածը բառացիորեն թարգմանված է հայերեն բնագրից: Բացի այդ երկու հրատարակություններում էլ խոսքը ոչ թե Գանձասարի կաթողիկոսներից որեւէ մեկի, այլ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցու մասին է (**Զաքարիա Սարկաւագ,** Պատմագրութիւն, հ. Բ., Վաղարշապատ, 1870, էջ 60-61, հմմտ. **Закарий Канакерци**, Хроника, էջ159):

3 Տե՛ս Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 9բ:

4 Անդ, էջ 10ա:

5 Անդ, էջ 10բ:

6 Անդ, էջ 10բ-11ա, հմմտ. **Մ. Բարխուդարեանց**, Պատմութիւն Աղուանից, հ. Բ., Թիֆլիս, 1907, էջ 66:

7 1669 թ. օգոստոսին Պետրոս Կաթողիկոսը դիմում է Սուլեյման շահին՝ բողոքելով, որ Ղարաբաղի, Զարուզբիլի եւ Շամախու մուսուլման իշխանավորները կրոնական հալածանքի են ենթարկում նույն գավառների հայերին եւ խոչընդոտում են Հայոց Եկեղեցու ծեսերի կատարմանը: Սուլեյման շահը Ղարաբաղի բեկլարբեկ Ռուդուլու խանին ուղղված հրովարտակում հայտարարելով, որ քրիստոնյաներին կրոնական հալածանքի ենթարկելը դեմ է շարիաթի կանոններին, հրամայում է քննել Պետրոս Կաթողիկոսի բողոքը եւ սանձել մուսուլման իշխանավորների եւ ավատատերերի կրոնական մոլեռանդությունը («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հրովարտակներ, պրակ III, վավ. 28, էջ 74):

8 Պետրոս Կաթողիկոսի օրոք Գանձասարի կաթողիկոսության բարվոք վիճակի մասին վկայում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ալեքսանդր Ա. Ջուղայեցին (1706-1714), որն իր կոնդակներից մեկում գրում է, որ

Գանձասարի կաթողիկոսության հեղինակության աճի արտացոլումն էր նաեւ այն, որ Նոր-Ջուղայի հայ առեւտրական ընկերությունները Ռուսաստանում իրենց առեւտրային գործառնությունները կարգավորելու համար դիմեցին ոչ թե Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցուն, այլ Պետրոս Խանձքեցուն, որը 1672 թ. դեկտեմբերի 2-ին նամակ գրեց Ալեքսեյ Միխայլովիչ ցարին՝ խնդրելով հովանավորել Նոր-Ջուղայի՝ Ռուսաստանում առեւտրով զբաղվող վաճառականներին եւ ամբողջ հայ ժողովրդին[9]:

Պետրոս Կաթողիկոսը վախճանվեց 1675 թ.: Վարդան Օձնեցին գրում է, որ մահանալուց առաջ Պետրոս Խանձքեցին 1652 թ. տված իր պարտավորագրի համաձայն իր մահից հետո Գանձասարի կաթողիկոսությունը թողեց Հասան-Ջալալյանների տոհմի ներկայացուցիչ Երեմիային[10]: Մեկ այլ հիշատակարանի համաձայն 1675 թ. Պետրոս Կաթողիկոսը կտակով Գանձասարի կաթողիկոսական աթոռը հանձնում է իր աշակերտ Սիմեոնին, որը չէր պատկանում Հասան-Ջալալյան տոհմին: Պետրոս Կաթողիկոսի վախճանվելուց հետո Սիմեոնը «կամակցությամբ ամենայն մեծամեծաց տանս Աղուանից» օծվում է Գանձասարի Կաթողիկոս եւ մեկնում Ղազվին, միաժամանակ հաստատվում է Գանձասարի Կաթողիկոս եւ Սուլեյման շահի, եւ այդ ժամանակ Պարսկաստանում գտնվող Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցու կոնդակով[11]: Իսկ Սուլեյման շահի՝ Երեմիային Գանձասարի Կաթողիկոս հաստատող հրովարտակում ասվում է, թե Երեմիան, ներկայանալով շահին, հայտնել է, որ իր հորեղբայր Գրիգոր Հասան-Ջալալյան Կաթողիկոսի մահից հետո իր անչափահաս լինելու պատճառով Կաթողիկոս է դարձել Պետրոսը, որը դեռ իր կենդանության օրոք կաթողիկոսությունն իրեն է հանձնել[12]:

Փաստն այն է, որ Պետրոս Կաթողիկոսի մահից հետո աթոռակալական պայքարը Գանձասարի կաթողիկոսությունում կրկին սրվել էր: Պայքարն այս անգամ ընթանում էր Երեմիա Հասան-Ջալալյանի (1676-1700) եւ նրան հակաթոռ Սիմեոն Խոտորաշենցու (1675-1701) միջեւ[13]:

Պայքարին միջամտում է նաեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցին, որը 1677 թ. Վրաստանում հանդիպում է Գանձասարի հակաթոռ կաթողիկոսներին եւ հաշտեցնում նրանց[14]: Սիմեոն Երեւանցին այս մասին գրել է. «Եւ Յակոբ Կաթուղիկոսն եւս ոչ սակաւ ջանայ եւ համոզէ ի խաղաղութիւն... եւ յետ բազմիցս խրատելոյն, առնու զձեռագիր ի Սիմօնէն նզովիւք հանդերձ, զի լռեսցի ի կաթուղիկոսացն գործոց, այս ինքն՝ յեպիսկոպոս

Պետրոս Կաթողիկոսի օրոք միայն Գանձասարի վանքն ունեցել է 80 միաբան, բազմաքանակ եկեղեցական սպասք եւ դրամ (Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 15բ-18բ):

9 Տես "Армяно-русские отношения в XVII веке", Сборник документов, т. I, Ереван, 1953, էջ 91-92:

10 Տես Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 11ա:

11 Տես Մատենադարան, ձեռ. թ. 8965, էջ 361բ:

12 Տես «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հրովարտակներ, պրակ III, վավ. 43, էջ 103-104:

13 Ըստ Սիմեոն Երեւանցու՝ Սիմեոն Խոտորաշենցին իրեն Գանձասարի Կաթողիկոս հռչակելուց հետո լքում է կաթողիկոսանիստ Գանձասարի վանքը՝ վերցնելով վանքի ամբողջ գույքը, եւ տեղափոխվում իր հայրենի գյուղը՝ Խոտորաշեն: Այդ պատճառով Հակոբ Դ. Ջուղայեցին բանադրում է Սիմեոնին եւ Գանձասարից Էջմիածին կանչելով ոմն Երեմիա արեղայի՝ նրան միաժամանակ ձեռնադրում է եպիսկոպոս, ապա օծում Գանձասարի Կաթողիկոս («Ջամբռ», էջ 80):

14 Տես **Ա. Հովհաննիսյան**, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք 2, Երեւան, 1959, էջ 208-209:

ձեռնադրելոյ, եւ ի Մեռօն օրհնելոյ, այլ եւ յազգականաց իւրոց մի եւս լինիցի ոք Կաթուղիկոս»[15]: Սիմեոն Երեւանցին նաեւ նշում է, որ այդպիսի սխալ եւ անկանոն վիճակը շարունակում էր գոյություն ունենալ «յԱղուանս եւ ի Սիս եւս, զի ազգականք կաթողիկոսացն յառաջադրեն զինքեանս ի կաթուղիկոսութիւն որպէս զհայրենի ժառանգութիւն համարելով իւրեանց. յորմէ ոչ պակաս ծնանին կռիւք ի յազգականսն, եւ երկճղութիւն եւ խռովութիւն ի ժողովուրդսն»[16]:

Այսպիսով, Ամենայն Հայոց Կաթողիկոս Հակոբ Դ. Ջուղայեցու եւ Գանձասարի հակաթոռ կաթողիկոսների հանդիպման արդյունքում Սիմեոն Խոտորաշենցին 1677 թ. օգոստոսի 25-ին պարտավորագիր է տալիս՝ հաստատելով, որ իր ժառանգները զրկվելու են Կաթողիկոս դառնալու իրավունքից, իսկ կաթողիկոսության ժառանգականությունը վերապահվում է Հասան-Ջալալյաններին: Սիմեոնը հայտնում է նաեւ, որ ինքը թուղթ է տվել Հակոբ Դ. Ջուղայեցուն, որով պարտավորվել է ենթարկվել[17]:

Բացի այդ, Գանձասարի կաթողիկոսության թեմերը բաժանվում են երկու հակամարտող կաթողիկոսների միջեւ: Արցախի թեմերը տրվում են Երեմիա Հասան-Ջալալյանին, իսկ Գանձակի խանության ու Շիրվանի թեմերը՝ Սիմեոն Խոտորաշենցուն:

Սակայն հակաթոռ կաթողիկոսների միջեւ հաշտությունը երկար չի տեւում: Հակոբ Դ. Ջուղայեցու մահից[18] հետո նրանց պայքարը շարունակվում է արդեն Ամենայն Հայոց նորընծա Կաթողիկոս Եղիազար Ա. Այնթափցու (1681-1691) օրոք, եւ «սկսանին զսա զզուեցուցանել եւ բազմիցս ցաւեցուցանել»[19]: Եղիազար Այնթափցին մի քանի անգամ հանդիմանում է Սիմեոն Խոտորաշենցուն եւ հրամայում հնազանդվել: Միաժամանակ Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարգադրում է երկու կաթողիկոսներին միասին իրականացնել մյուռոնի եւ եպիսկոպոսների ձեռնադրումը, ինչպես նաեւ աթոռի եկամուտների հավաքագրումը եւ ծախսումը: Եղիազար Այնթափցին նաեւ դիմում է ժողովրդին՝ խնդրելով առաջնորդվել այդ կանոններով եւ ընդունել նրանց, իսկ եթե մեկնումեկը շեղվի այդ ուղուց՝ հրաժարվել նրանցից[20]: Երբ Սիմեոն Խոտորաշենցին հերթական անգամ անհնազանդություն է ցուցաբերում, Խաչենի, Վարանդայի եւ Դիզակի մելիքները համախոսականով դիմում են Եղիազար Այնթափցուն՝ հայտնելով, որ միայն Երեմիա Հասան-Ջալալյանին են ճանաչում Գանձասարի Կաթողիկոս եւ խնդրում են բանադրել Սիմեոն Խոտորաշենցուն[21]: Եղիազար Այնթափցու հրամանով Սիմեոնը պարտավորվում է «առանց վարելոյ զիշխանութիւն կաթուղիկոսութեան նստի հանդարտ ի վանս իւր»[22]:

Այդուհանդերձ, Երեմիա Հասան-Ջալալյանի եւ Սիմեոն Խոտորաշենցու միջեւ պայքարը շարունակվում է նաեւ Եղիազար Այնթափցուն հաջորդած Նահապետ Եղեսացու (1691-1705) օրոք եւ հասնում մինչեւ իրենց կյանքի վերջին օրերը: Եթե Երեմիայի մահվան տարե-

15 «Ջամբռ», էջ 80:

16 Անդ:

17 Տես Մատենադարան, կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 1:

18 «Թվին ՌՃԻԹ օգոստոսի Բ-ումն Ըստամբոլ Աստուածածին եկեղեցումն Յակոբ Կաթուղիկոսն առ Աստուած փոխեց» (**Զաքարիա Ագուլեցի**, Օրագրութիւն, Երեւան, 1938, էջ 151):

19 «Ջամբռ», էջ 80:

20 Տես անդ:

21 Տես Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 13ա:

22 Տես անդ:

թիվը (1700 թ.) կասկած չի հարուցում[23], ապա Սիմեոն Խոտորաշենցու մահվան տարեթիվը հստակ չէ: Վարդան Օձնեցին նշում է, որ «Երեմիայ եւ Սիմեոն վախճանին ի միում ամի, այն է յամի 1700...»[24], իսկ Աշոտ Հովհաննիսյանը Սիմեոն Խոտորաշենցու մահվան տարեթիվ է համարում 1702 թ.[25]: Իր հերթին Սիմեոն Երեւանցին վկայում է, որ Սիմեոն Խոտորաշենցին մահացել է 1701 թ.[26], ինչն առավել հավանական է:

Երեմիա եւ Սիմեոն կաթողիկոսների մահվանից հետո նրանց հաջորդում են Եսայի Հասան-Ջալալյանը (1701-1728) եւ Ներսես Ջրաբերդցին (1706-1763): Աշոտ Հովհաննիսյանը գրում է, թե «1699 թ. Էջմիածնի հրամանով Երեմիան աթոռակից Կաթողիկոս է օծում Եսայուն»[27] եւ որպես աղբյուր նշում «Ջամբռի» էջերը[28], որոնցում այդպիսի բան գրված չէ: Իրականում «Ջամբռում» նշվում է. «Եսային նստի յԱղուանս ի ՌՃԾԱ թուոջն» (1702 թ.)[29]: Իր հերթին Վարդան Օձնեցին գրում է. «Երեմիա Կաթուղիկոս... հրամանաւ Նահապետ Կաթուղիկոսի Հայոց՝ օծանի Կաթուղիկոս ամենայն Աղուանից զեղբորորդին[30] իւր զԵսայի եպիսկոպոս Հասան-Ջալալեանց յամի 1695...»[31]: Շարունակելով իր պատմությունը՝ Վարդան Օձնեցին նշում է. «...Շահսուլթան Հիսէյին արքայն պարսից հրովարտակաւ ի թուին տաճկաց 1111 հրամայի Բէկլար Բէկին Ղարաբաղու եւ Ջարազրիլի երկրին՝ դադարեցուցանել զհալածումն Քրիստոնէից...»[32]: Այստեղ խոսքը շահ Սուլթան Հուսեյնի՝ 1111 թ. շավալ ամսի (1700 թ. մարտի 22-ապրիլի 20) հրամանագրի մասին է, որով Շիրվանի, Կախեթի ու Արցախի տեղական իշխանություններին հանձնարարվում էր օգնություն ցուցաբերել Աղվանից կաթողիկոսության ենթակա Շիրվանի հայերից եկեղեցական հարկերը հավաքելու գործում[33]: Այնուհետեւ Վարդան Օձնեցին գրում է. «...եւ ի թուին տաճկաց 1113 յամի 1697 հրովարտակաւ յիշեալ շահ Հիսէյինին հաստատի Եսայի Կաթուղիկոս Աղուանից»[34]: Իրականում, սակայն, Եսայի Հասան-Ջալալյանի կաթողիկոսական իրավունքները շահ Սուլթան Հուսեյնի կողմից հաստատվել են 1113 թ. ջումադի առաջին ամսի (1701 թ. հոկտեմբերի 4-նոյեմբերի 3) հրովարտակով[35]: Հետեւաբար Վարդան Օձնեցին սխալվում էր՝ նշելով 1697-ը՝ որպես պարսից շահի կողմից Եսայիի կաթողիկոսական իրավունքների հաստատման տարի, ուստի կարող էր սխալվել նաեւ Եսայիի՝ 1695 թ. Կաթողիկոս օծվելու հարցում: Մեր կարծիքով, ինչպես 1695, այնպես

23 Բ. Ուլուբաբյանը համարում է, որ Երեմիա Կաթողիկոսը վախճանվել է 1702 թ. (**Բ. Ուլուբաբյան**, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, Երեւան, 1998, էջ 208), սակայն բարեբախտաբար պահպանվել է Երեմիա Հասան-Ջալալյանի տապանաքարը, որի վրա գրված է. «Այս է տապան Երեմիա Կաթողիկոսին Աղուանից Ցազգէն Ջալալ Դօլին: ՌՃԽԹ: (1700) թուին» (**Մ. Բարխուդարեանց**, Արցախ, Բագու, 1895, էջ 176, հմմտ. «Դիվան հայ վիմագրության», պրակ V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երեւան, 1960, էջ 65):

24 Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 14բ:

25 **Ա. Հովհաննիսյան**, անդ, էջ 293:

26 «Ջամբռ», էջ 80:

27 **Ա. Հովհաննիսյան**, անդ, էջ 293:

28 «Ջամբռ», էջ 58, 81:

29 Անդ, էջ 81:

30 Երեմիա Կաթողիկոսի եղբայրը Վելիջան բեկն էր (**Ն. Ադոնց**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Երեւան, 1944, էջ 144):

31 Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 14ա:

32 Անդ:

33 Հրամանագիրը գրվել էր Երեմիա Կաթողիկոսի եղբորորդի Եսայի վարդապետի խնդրագրի հիման վրա («Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հրովարտակներ, պրակ III, վավ. 63, էջ 146):

34 Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 14ա:

35 Տես «Մատենադարանի պարսկերեն վավերագրերը», հրովարտակներ, պրակ III, վավ. 65, էջ 149-152:

էլ 1697 թվականների նշումը Վարդան Օձնեցու կողմից պարսկական գրաբգրությունը հայկականի վերածելիս թույլ տրված անճշտության հետևանք է, իսկ Եսային Կաթողիկոս է օծվել շատ ավելի ուշ: Չնայած Եսային իրականացրել է կաթողիկոսական գործառույթներ, սակայն, ինչպես տեսանք, շահի կողմից նրա կաթողիկոսական իրավունքները հաստատվել են միայն 1701 թ.[36]: Պավել Չոբանյանը նույնպես Եսայիի կաթողիկոսության առաջին տարին համարում է 1701 թ.[37]:

Ինչ վերաբերում է Ներսեսին, ապա սկզբնաղբյուրում չի նշվում, թե երբ է տեղի ունեցել նրա օծումը: Հայտնի է միայն, որ «Սիմէօն Կաթուղիկոս զօծումն Եսայեայ հակառակ նորա ինքս ինքեան օծանէ Կաթուղիկոս զեղբորորդի իւր զՆերսէս վարդապետ ի վանս Երից Մանկանց, որ էր այրիացեալ քահանայ»[38]:

Սիմեոն Երևանցին, խոսելով Ներսեսի օծման տարեթվի մասին, նշում է. «Ի հինգերորդ ամ կաթուղիկոսութեան Եսայեայ, Ներսէս անուն ոմն սեւագլուխ յազգէ վերոյիշեալ բանադրեցեալ Սիմեօն Կաթուղիկոսին, ի յԱղուանս կաշառօք եւ խաբէութեամբ օծանի Կաթուղիկոս՝ խոչ եւ սատան[39] Եսայեայ ի ՌՃԾԵ թուոջ մերում»[40]: Ինչպես տեսնում ենք, ըստ Վարդան Օձնեցու, Ներսեսը օծվել է Սիմեոն Խոտորաշենցու կենդանության օրոք, իսկ, ըստ Սիմեոն Երևանցու՝ շատ ավելի ուշ՝ 1706 թ.: Հավանաբար Սիմեոն Խոտորաշենցու օրոք Ներսեսը դարձել է աթոռակից Կաթողիկոս, իսկ կաթողիկոսական օծումը տեղի է ունեցել 1706 թ.: Այս տարեթվի օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ մինչ այդ չկա ոչ մի հիշատակություն Ներսեսի կաթողիկոսական գործունեության մասին:

Փաստորեն, Գանձասարի կաթողիկոսության ներսում աթոռակալական պայքարը, որ սկիզբ էր առել դեռևս ԺԶ դարի կեսերից եւ հատկապես սրվել Երեմիա Հասան-Ջալալյանի եւ Սիմեոն Խոտորաշենցու օրոք, շարունակվեց նաև ԺԸ դարի սկզբին՝ Եսայի Հասան-Ջալալյանի եւ Ներսես Ջրաբերդցու միջև[41]:

Չնայած հակաթոռության հիմնահարցի առկայությանը՝ Գանձասարի կաթողիկոսությունը գործուն մասնակցություն է ունեցել ԺԸ. դարի հայ ժողովրդի ազատագրական պայքարին: Այդ դարի 20-ական թվականներին Գանձասարի կաթողիկոսությունը աջակցել է Արցախի սղնախներին թուրքական եւ պարսկական ուժերի դեմ մղված պայքարում, իսկ ժամանակի կաթողիկոսներ Եսայի Հասան-Ջալալյանը եւ Ներսես Ջրաբերդցին, որոնք մեծ հեղինակություն էին վայելում արցախահայության շրջանում, ազատագրական պայքարի գաղափարը առաջնային դարձնելով, ղեկավարել են սղնախների կազմակերպումն ու ռազմական բազմապիսի գործողությունների իրականացումը:

---

36 Եսայի Հասան-Ջալալյանը Գանձասարի կաթողիկոսական աթոռին բարձրացավ հայ ժողովրդի համար ծանր ժամանակներում, սակայն իր եռանդուն եւ նպատակասլաց գործունեության շնորհիվ կարողացավ հենց սկզբից ազատագրական գաղափարների շուրջ համախմբել Արցախի մելիքներին եւ դառնալ ազատագրական պայքարի գլխավոր ոգեշնչողն ու ղեկավարը (**Է. Դանիելյան**, Գանձասարի պատմություն, Ե., 2005, էջ 216-217):

37 Տե՛ս **Պ. Չոբանյան,** Եսայի Հասան-Ջալալյան. «Քրիստոնյա Հայաստան», հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 316:

38 Մատենադարան, ձեռ. թ. 4331, էջ 14բ:

39 «Սատան»-ը եբրայերեն բառ է, որ նշանակում է հակառակորդ, չարահոգի, մատնիչ (**Բ. Ուլուբաբյան**, Հայոց Արեւելից կողմանց եկեղեցին եւ մշակույթը, էջ 209):

40 «Ջամբռ», էջ 82:

41 Տե՛ս **Լ. Մկրտումյան**, նշվ. աշխ., էջ 73-78: